ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի որոշում 2018թ. հունվարի 24-ի
№ 3 նիստի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀՀ ԿԳՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

Ղեկավարվելով **ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի** կանոնադրությամբ՝ կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ–ի ուսանողների օգնությունների հատկացման *կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի

նախագահ՝ Ա. Թ. Գրիգորյան

Հաստատված է ՀՀ ԿԳՆ ԱՊՔ
մանկավարժական խորհրդի
2018թ. հունվարի 8-ի N 4
նիստում ՀՀ ԿԳՆ
ԱՊՔ մանկավարժական
խորհրդի
նախագահ՝ Է. Գ.
Գասպարյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Արարատի պետական քոլեջի (այսուհետ՝ ԱՊՔ) ուսանողներին օգնությունների հատկացման կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) իրենից ներկայացնում է ԱՊՔ ներքին իրավական փաստաթուղթ, որը կազմվել է «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության որոշումների, ՀՀ ԿԳ նախարարի հրամանների, ԱՊՔ արհեստակցական միության կանոնադրության, ԱՊՔ ներքին կարգապահական կանոնների դրույթներին և այլ իրավական ակտերին համապատասխան:

1.2 Սույն կանոնակարգը սահմանում է ԱՊՔ ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներքոլեջային կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:

1.3 Ուսանողական նպաստը լրիվ կամ մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը՝ ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ԱՊՔ-ի ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

1.4 Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական համակարգերում սովորող ուսանողների վրա:

1.5 Սույն կանոնակարգը կարող է լրացվել կամ փոփոխվել ԱՊՔ մանկավարժական խորհրդի որոշմամբ:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Պետությունն ուսանողական նախաստի ձևով, մրցութային հիմունքով, ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար հատկացված անվճար ուսուցման տեղում՝

2.1.1 մինչև 19 տարին լրանալը հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին՝ մինչև ուսումնառության ավարտը,

2.1.2 19 և ավելի տարիք ունեցող հիմնական կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին՝ մինչև 19 տարին լրանալն ընդունված ուսանողների մրցույթից հետո՝ թափուր տեղի առկայության դեպքում,

2.1.3 միջնակարգ կրթության հիմքով նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություն ընդունելության կարգով ընդունված ուսանողին,

2.1.4 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված և ՀՀ օրենքներով սահմանված հետևյալ սոցիալական խմբերին՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած կամ նրանց թվին պատկանող անձանց, որոնց վճարվում է կրթաթոշակ՝ ԱՊՔ-ում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին ու հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, որոնց, հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացող նպաստից կամ թոշակից՝ համաձայն «Հայաստանի Հանրապետություն հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

գ)

2.2 Բողոքը պետք է ներկայացնել տնօրենին կամ քոլեջի այլ ստորաբաժանումներին:

2.3 Բողոքի ներկայացման ժամկետները սահմանափակված չեն:

2.4 Բողոք ներկայացնելու պահին ուսանողը այն ընդունող մարմնի կողմից տեղեկացվում է բողոքի դիտարկման տևողության մասին:

6. Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կրթաթոշակ են ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով: